ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

2019թ. սեպտեմբերի 19–ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. **Մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ:**
2. **2019-2020 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների թեմաների մասին:**
3. **Ընթացիկ հարցեր:**

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ԿՔԱ ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15 (տասնհինգ) անդամ

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ:

Արտահայտվեցին՝

Մ.Աղաջանյանը, Մ.Քոչարյանը:

2. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից նախատեսված թեմաների վերնագրերը: Ներկայացված վերնագրերում կատարվեցին մասնակի փոփոխություններ:

Որոշեցին՝

Հաստատել:

3. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը «» թեմայով դոկտորական ատենախոսության վերնագիրը փոփոխելու վերաբերյալ: Դոկտորանտը հակիրճ ներկայացրեց իր թեմայի բովանդակութունը և առաջարկեց «Խնդիրների լուծման մեթոդական համակարգի կատարելագործումը հանրակրթական դպրոցում քիմիայի ուսուցման գործընթացում» վերնագիրը:

Ս.Պիպոյանն առաջարկեց դոկտորանտին աշխատանքը ներկայացնել տպագիր տարբերակով, որպեսզի ամբիոնի պրոֆեսորները կարողանան ծանոթանալ դրա բովանդակությանը:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս.Պիպոյանը, Տ.Թանգամյանը, Մ.Երիցյանը, Ա.Բաբախանյանը, Ի.Սիրեկանյանը:

Որոշեցին՝

Աշխատանքին ծանոթանալուց հետո կրկին քննարկել թեմայի վերնագրի փոփոխության հարցը:

4. Լսեցին՝

Ռ.Սադոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնի քննարկման է ներկայացվում ամբիոնի դասախոս Ինեսսա Նորայրի Սիրեկանյանի «Օքսիդավերականգնման պրոցեսների հիմնական օրինաչափությունները» ուսումնական ձեռնարկը:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Մ.Երիցյանը, Ա.Առուստամյանը, Ա.Բաբախանյանը, Ի.Սիրեկանյանը:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 15

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Որոշեցին՝

Ի.Ն.Սիրեկանյանի կողմից կազմած «Օքսիդավերականգնման պրոցեսների հիմնական օրինաչափությունները» ուսումնական ձեռնարկը ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱԴՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

2019թ. հոկտեմբերի 18–ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

2019թ. նոյեմբերի 20-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. **Ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի քննարկում:**
2. **Ամբիոնի հայցորդ Նաիրա Մանվելյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:**
3. **Մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ:**
4. **Ընթացիկ հարցեր:**

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ԿՔԱ ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 14 (տասնչորս) անդամ

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաբերյալ: Ռ.Սադոյանը հայտնեց, որ աշխատանքի վերնագիր է առաջարկվում «Նախագծի մեթոդը որպես սովորողների իմացական հետաքրքրությունների զարգացման միջոց քիմիա առարկան դպրոցում ուսուցանելիս»:

Ա.Խաչիկյանը հակիրճ ներկայացրեց իր աշխատանքի էությունը:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս.Պիպոյանը, Տ.Թանգամյանը, Ա.Բաբախանյանը, Ռ.Սիմոնյանը:

Հայցորդին առաջարկվեց վերանայել վերնագիրը, քննարկել այն իր ղեկավարի հետ, համապատասխանեցնել վերնագիրն աշխատանքի բովանդակությանը, այնուհետև ամբիոնի քննարկմանը ներկայացնել վերանայված տարբերակը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն ամբիոնի հայցորդ Նաիրա Մանվելյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ: Ռ.Սադոյանը տեղեկացրեց, որ հայցորդը պատրաստվում է հանձնել մասնագիտական որակավորման քննություններ, ինչի համար անհրաժեշտ է, որ պատրաստ լինի աշխատանքի առնվազն 80%-ը:

Ն.Մանվելյանը հակիրճ ներկայացրեց իր «Քիմիայի արտադասարանական աշխատանքների կազմակերպման եղանակները և ձևերը հիմնական դպրոցում» վերնագրով ատենախոսության շրջանակներում կատարած աշխատանքները, տպագրված հոդվածները:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս.Պիպոյանը, Տ.Թանգամյանը, Ա.Բաբախանյանը:

Որոշեցին՝

Երաշխավորել հայցորդ Նաիրա Մանվելյանին մասնակցել մասնագիտական որակավորման քննություններին:

3. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ:

Արտահայտվեցին՝

Ռ.Սիմոնյանը, Մ.Քոչարյանը, Վ.Հովսեփյանը:

Պրակտիկայի մեթոդիստ ղեկավարները զեկուցեցին պրակտիկայի ընթացքի մասին, տեղեկացրեցին ընթացքում ծագած հարցերի և խնդիրների վերաբերյալ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա ընթացիկ և ամփոփիչ ստուգումների տոմսերի վերաբերյալ:

Որոշեցին՝

Հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱԴՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

2019թ. դեկտեմբերի 3-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնում առկա հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ:
2. Ամբիոնի դասախոսների կողմից դասավանդվող առարկաների և դրանց արդիականության մասին:
3. Ամբիոնի դասախոսների հաղորդումը մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի և առկա խնդիրների մասին:
4. Ամբիոնի դասախոսների փոխադարձ դասալսումների մասին:
5. Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում իրականացվող աշխատանքներում տեղ գտած խնդիրների և դրանց լուծման առաջարկությունների մասին:
6. Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների հաշվետվության մասին:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր ԿՔԱ ֆակուլտետի դեկան, կենս.գիտ.դոկտոր, դոցենտ Ռ.Սադոյանը ու կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 16 (տասնվեց) անդամ (ներկայաթերթիկը կցվում է)

Մինչ ամբիոնի նիստի սկիզբը ԿՔԱ ֆակուլտետի դեկան Ռ.Սադոյանը ամբիոնի աշխատակազմին ներկայացրեց ամբիոնի նորանշանակ վարիչ կենս.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանին:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնում առկա հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ: Ամբիոնի վարիչը հանձնարարեց ամբիոնի աշխատակիցներին մեկշաբաթյա ժամկետում գրավոր ներկայացնել հաղորդումներ առկա խնդիրների մասին, որոնք կքննարկվեն և կառաջակվեն հնարավոր լուծումներ:

2. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը ամբիոնի դասախոսների կողմից դասավանդվող առարկաների և դրանց արդիականության մասին: Ս.Պիպոյանը հանձնարարեց դասախոսներին վերլուծել, թե որքանով են արդիական դասավանդվող առարկաները,

ինչպես նաև մեկշաբաթյա ժամկետում գրավոր հանդես գալ առաջարկություններով դասավանդվող առարկայացանկը վերանայելու և կրթության որակը բարձրացնելու նպատակով:

3. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի և առկա խնդիրների մասին:

Դասախոսները զեկուցեցին իրենց կողմից ղեկավարվող ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ: Դասախոսների կողմից վերհանվեցին այն խնդիրները, որոնք առկա են այդ ամփոփիչ ատեստավորման աշխատանքների ընթացքում: Ամբիոնի վարիչ կողմից առաջարկվեց ամփոփել այդ խնդիրները և լուծումներ գտնել իրավիճակը շտկելու համար:

Քննարկվեց նաև անցած ուսումնական տարում ավարտական ամփոփիչ ատեստավորում չանցած երկու ուսանողի վերականգնման և նրանց ավարտական աշխատանքների ղեկավար նշանակելու հարցը:

Որոշվեց՝

Հաշվի առնելով ամբիոնի դասախոսների բեռնվածության աստիճանը ավարտական աշխատանքներով՝ մեկ շաբաթվա ընթացքում անդրադառնալ այդ հարցին և նշանակել վերոնշյալ երկու ուսանողի ավարտական աշխատանքների ղեկավարներ և սահմանել այդ աշխատանքների թեմաները:

4. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի դասախոսների փոխադարձ դասալսումների անհրաժեշտության մասին: Ամբիոնի վարիչը հայտնեց, որ շարունակվելու են փոխադարձ դասալսումները, որոնք շատ կարևոր են փորձի փոխանակման և կրթության որակի բարելավման տեսակետից ու տեղեկացրեց, որ յուրաքանչյուր դասալսման արդյունք պետք է գրանցվի դասալսումների գրանցամատյանում: Ս.Պիպոյանը ներկայացրեց դասալսումների ժամանակացույցը:

Որոշեցին՝

Մասնակի փոփոխություններով հաստատել դասալսումների ժամանակացույցը:

5. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում իրականացվող աշխատանքներում տեղ գտած խնդիրների և դրանց լուծման առաջարկությունների մասին: Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ Classroom հարթակում պետք է ներբեռնված լինեն առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, ընթացիկ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերը, ուսումնական նյութերը, ինչպես նաև հանձնարարեց ամբիոնի դասախոսներին երկշաբաթյա ժամանակահատվածում ներկայացնել Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում ունեցած խնդիրները, ինչպես նաև հարկ եղած դեպքում հանդես գալ առաջարկություններով:

6. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի հայցորդների և ասպիրանտների հաշվետվության մասին:

Ամբիոնի հայցորդ Նարինե Ստեփանյանը ներկայացրեց իր կողմից կատարած աշխատանքները (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Ն.Կնյազյանը, Ռ.Սիմոնյանը, Մ.Քոչարյանը:

Ամբիոնի հայցորդ Արմենուհի Փիլթակյանը ներկայացրեց իր կողմից կատարած աշխատանքները (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Ռ.Սադոյանը:

Որոշեցին՝

Ատեստավորել:

7. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա ընթացիկ և ամփոփիչ ստուգումների տոմսերի վերաբերյալ:

Որոշեցին՝

Հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

2019թ. դեկտեմբերի 9-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող գիտամանկավարժական գործունեության մասին:
2. Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների հաշվետվությունների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 16 (տասնվեց) անդամ (ներկայաթերթիկը կցվում է)

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը դասախոսների կողմից իրականացվող գիտամանկավարժական գործունեության մասին**:**

Բոլոր ներկա դասախոսները զեկուցեցին իրենց կողմից իրականացվող գիտամանկավարժական գործունեության մասին:

Ս.Պիպոյանն առաջարկեց համագործակցել նաև ուսանողների հետ ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի կատարման միջոցով և ասաց, որ այդ աշխատանքները պետք է ունենան գիտագործնական նշանակություն:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի հայցորդների և ասպիրանտների հաշվետվության և ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաբերյալ:

Ա.Խաչիկյանը հակիրճ ներկայացրեց իր աշխատանքի բովանդակությունը և կատարած աշխատանքները:

Ատենախոսության թեմայի վերնագրի արդիականացման նպատակով ծավալված տարակարծիք քննարկումների արդյունքում Ս.Պիպոյանը հանձնարարեց Տ.Թանգամյանին, Վ.Հովսեփյանին և Ա.Բաբախանյանին ներկայացնել մասնագիտական առաջարկություններ ատենախոսության վերնագիրն առավել նպատակային դարձնելու նպատակով:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Տ.Թանգամյանը Ռ.Սիմոնյանը, Գ.Անանյանը, Վ.Հովսեփյանը, Ա.Բաբախանյանը:

Որոշեցին՝

1. Ատեստավորել Անուշ Խաչիկյանին:
2. Ատեստավորել ամբիոնի հայցորդներ Ն.Ստեփանյանին և Ա.Փիլթակյանին՝ նրանց կողմից 2019 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 4 ամբիոնի նիստում ներկայացրած հաշվետվությունների հիման վրա:
3. Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել «Նախագծերի մեթոդը որպես աշակերտների հետազոտական կարողությունների զարգացման միջոց քիմիայի ուսուցման գործընթացում» թեման, որպես ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի թեկնածուական ատենախոսության վերնագիր:

Ամբիոնի հայցորդներ Նաիրա Մանվելյանը և Գայանե Պետրոսյանը նիստին չեն ներկայացել և չեն ներկայացրել հաշվետվությունները:

3. Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը փոխադարձ դասալսումների վերաբերյալ: Ս.Պիպոյանը հորդորեց բոլոր դասախոսներին ակտիվ կերպով մասնակցել դասալսումներին՝ ըստ նախապես կազմած ժամանակացույցի, ուշադրություն դարձնել օգտագործվող մեթոդներին, լսարանի կառավարմանը, մանակավարժական վարպետությանը՝ կատարելով համապատասխան գրանցումներ դասալսումների համար նախատեսված մատյանում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

2019թ. դեկտեմբերի 27-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական և մագիստրոսական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կարգերի վերաբերյալ:
2. Ամբիոնում առկա հիմնախնդիրների և դրանց լուծումների մասին:
3. Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2019-2020 ուստարում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին:
4. Ամբիոնում փոխադարձ դասալսումների վերաբերյալ:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք անդամ (ներկայաթերթիկը կցվում է)

Նիստի առաջին հարցի ներկայացմանը մասնակցում էին կենսաբանության և քիմիայի բակալավրական և մագիստրոսական ավարտական կուրսերի ուսանողները /55 հոգի/

1. **Ներկայացվեց՝**

Ավարտական և մագիստրոսական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կարգերի շնորհանդեսը (ներկայացնող՝ Ա. Փիլթակյան):

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանը, Ռ.Սիմոնյանը, Վ.Հովսեփյանը, Ս.Պիպոյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնում առկա հիմնախնդիրների և դրանց լուծումների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց դասախոսների կողմից առաջադրած խնդիրները և տեղեկացրեց, որ դրանք ըհդհանրացված կերպով ներկայացվելու են ֆակուլտետի խորհրդի նիստին՝ հետագա լուծման ուղիները փնտրելու նպատակով:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին:

Ս.Պիպոյանը հանձնարարեց դասախոսներին Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակի արդյունավետության մասին ներկայացնել մանրամասն վերլուծություններ՝ դրանք ամփոփելու և ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն ներկայացնելու նպատակով:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

4. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնում փոխադարձ դասալսումների վերաբերյալ: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ դասալսումները շարունակվելու են նաև 2-րդ կիսամյակում, ինչն իրականացնելու համար կկազմվի նոր ժամանակացույց: Ս. Պիպոյանը խնդրեց դասախոսներին լինել ավելի ակտիվ փոխադարձ դասալսումների գործընթացում:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումն առ այն, որ իր կատարած աշխատանքների հաշվետվությունը կներկայացնի ամբիոնի հայցորդ Նաիրա Մանվելյանը (հաշվետվությունը կցվում է):

Հայցորդը ներկայացրեց 2019 թվականի ընթացքում իր կատարած աշխատանքները:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվության հիման վրա ամբիոնի հայցորդ Նաիրա Մանվելյանին ատեստավորել:

6. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը Ժաննա Վլադիմիրի Սարգսյանի դոկտորական ատենախոսության թեմայի վերաբերյալ:

Ս.Պիպոյանը հայտնեց, որ ատենախոսության թեմա է առաջարկվում «Խնդիրների լուծման մեթոդական համակարգի կատարելագործման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում քիմիայի ուսուցման գործընթացում»:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Տ.Թանգամյանը, Վ.Հովսեփյանը, Ռ.Սիմոնյանը:

Որոշեցին՝

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել «Քիմիայի խնդիրների լուծման մեթոդական համակարգի կատարելագործման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում» թեման որպես Ժաննա Վլադիմիրի Սարգսյանի դոկտորական ատենախոսության վերնագիր:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N7

2020թ. հունվարի 24-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում առկա և հեռակա համակարգում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին:
2. 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում նախատեսվող աշխատանքների մասին:
3. 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի մասին:
4. 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող ընտրովի դասընթացների թեմաների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 18 (տասնութ անդամ (ներկայաթերթիկը կցվում է)

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում առկա և հեռակա համակարգում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց մշտադիտարկման արդյունքները: Ս.Պիպոյանը խնդրեց դասախոսներին շտկել արձանագրված թերացումները, Ն.Կնյազյանին, Ա.Առուստամյանին, Մ.Երիցյանին և Ա.Զիրոյանին հանձնարարեց տեղադրել հարթակում բացակա համապատասխան նյութերը:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

2. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում նախատեսվող աշխատանքների մասին: Ս.Պիպոյանն առաջարկեց ուսումնական նյութերը հարթակ տեղադրել միանգամից, ամբողջությամբ և/կամ մաս-մաս ըստ անհրաժեշտության, ինչպես նաև ընթացքում կատարել համապատասխան լրացումներ, առաջարկեց նախկինի նման գանահատվող հանձնարարությունները տեղադրել 1-ին և 2-րդ ընթացիկ ստուգումների միջև ընկած ժամանակահատվածում, հանձնարարության

տեսակը (թեստ, հարց, ռեֆերատ, այլ) և որակը, հիմք ընդունել դասավանդվող յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունները, թողնել դասախոսի հայեցողությանը, նվազագույնը 7 օր ժամկետով, իսկ գիտելիքների գնահատման բաղադրիչներում դրան հատկացնել «Ընթացիկ ստուգում» բաղադրիչի 5%-ը:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Ռ.Սիմոնյանը, Մ.Քոչարյանը, Ի.Սիրեկանյանը:

Որոշեցին՝

- Էլեկտրոնային դասընթացներում նյութերը տեղադրել միանգամից, ամբողջությամբ և/կամ մաս-մաս ըստ անհրաժեշտության, ընթացքում կատարելով համապատասխան լրացումներ,
- Գնահատվող հանձնարարությունները տեղադրել 1-ին և 2-րդ ընթացիկ ստուգումների միջև ընկած ժամանակահատվածում, հանձնարարության տեսակը (թեստ, հարց, ռեֆերատ, այլ) և որակը, հիմք ընդունել դասավանդվող յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունները, թողնել դասախոսի հայեցողությանը,
- Գնահատվող հանձնարարության կատարման համար սահմանել նվազագույնը 7 օր ժամկետ,
- Գիտելիքների գնահատման բաղադրիչներում գնահատվող հանձնարարության համար տրամադրել «Ընթացիկ ստուգում» բաղադրիչի 5%-ը,
- Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի մասին:

Որոշեցին՝

Հաստատել:

4. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող ընտրովի դասընթացների թեմաների մասին: Ս.Պիպոյանը նշեց, որ դասավանդվող ընտրովի դասընթացները պետք է լինեն համընդհանուր նշանակության, կարևոր գիտության տեսանկյունից և չբխեն միայն դասախոսի նեղ մասնագիտական գիտելիքներից:

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանն առաջարկեց, որ դասախոսները նախօրոք առաջադրեն թեմաներ ընտրովի դասընթացի համար, որպեսզի ուսանողները կարողանան ընտրել թե ինչ կցանկանան ուսումնասիրել ու սովորել:

Որոշեցին՝

Քննարկել և հաստատել 2019-2020 ուստարում դասավանդվող ընտրովի դասընթացների թեմաները:

5. **Ներկայացվեց՝**

Հեռակա ուսուցման համակարգում մանկավարժական պրակտիկայի մասին տեղեկատվություն (ներկայացնող՝ Վ.Հովսեփյան:) Վ.Հովսեփյանը տեղեկացրեց, որ կան խնդիրներ դասաբաշխման հետ, քանի որ «Քիմիա» մասնագիտությունում մանկավարժական պրակտիկայի ժամերը թափուր են, իսկ «Կենսաբանություն» մասնագիտությունում կան կուրսեր, որտեղ պրակտիկան տրված է 1 մեթոդիստին, ինչը դժվարեցնում է կազմակերպման գործընթացը:

Ս.Պիպոյանն առաջարկեց Վ.Հովսեփյանին ներկայացնել գրավոր առաջարկություններ ծագած խնդիրների լուծման ուղղությամբ (կցվում է):

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N8

2020թ. փետրվարի 18-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող գիտական գործունեության վերաբերյալ (զեկուցողներ՝ Ա. Առաքելյան, Ա.Նեբիշ)
2. Ամբիոնի ռազմավարական ծրագրի 2018-2019 ուսումնական տարվա կատարած գործողությունների հաշվետվության հաստատման մասին
3. Ռազմավարական ծրագրի շրջանակներում 2020թ. նախատեսվող աշխատանքների պլանավորման մասին
4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին
5. Ընթացիկ ստուգման հարցատոմսերի հաստատման մասին
6. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի փոխադարձ դասալսումների մասին:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին ներկա էր նաև ԿՔԱ ֆակուլտետի դեկան կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15 (տասնհինգ անդամ (ներկայաթերթիկը կցվում է)

Նիստի առաջին հարցի ներկայացմանը մասնակցում էին «Կենսաբանություն» բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները /15 հոգի/

1. **Ներկայացվեց՝**

Ս.Պիպոյանի ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսության շրջանակներում կատարած գիտահետազոտական աշխատանքները (ներկայացնող ասպիրանտ՝ Ա.Առաքելյան):

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանը, Ռ.Սիմոնյանը, Ս.Պիպոյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Ներկայացվեց՝**

Իրականացվող գիտական գործունեության մասին (ներկայացնող՝ Ա.Նեբիշ):

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանը, Ռ.Սադոյանը, Ռ.Սիմոնյանը, Ս. Պիպոյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն այն մասին, որ քիմիայի դասախոսների (մասնավորապես՝ ք.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ա.Բաբախանյան, ք.գ.դ.,

պրոֆ. Ա.Առուստամյան, ք.գ.թ., դոց. Վ.Հովսեփյան) մոտ արձանագրվել է ուսանողների հաճախումների ոչ ճիշտ գրանցում դասամատյանում, երբ կուրսի ավագը ներկա է դրել բացակա ուսանողներին: Դեկանը նշեց, որ դասաժամերի ընթացքում հաճախումների հաշվառումը պետք է կատարի բացառապես դասախոսը և վերջինս է պատասխանատու յուրաքանչյուր ուսանողի ներկա-բացակա գրանցման համար:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

4. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի ռազմավարական ծրագրի 2018-2019 ուսումնական տարվա կատարած գործողությունների հաշվետվության մասին: Ամբիոնի վարիչը հանձնարարեց դասախոսներին կրկին անգամ ուսումնասիրել ներկայացված հաշվետվության նախագիծը և առաջարկություններ ու նկատառումներ ունենալու դեպքում երկօրյա ժամկետում դրանք ներկայացել, որից հետո կներկայացվի լրամշակված տարբերակը ՀՊՄՀ կրթության որակի ապահովման և կառավարման բաժին:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

5. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը ռազմավարական ծրագրի շրջանակներում 2020թ. նախատեսվող աշխատանքների մասին: Ս.Պիպոյանը խնդրեց դասախոսներին մինչև սույն թվականի մարտի 1-ը ներկայացնել 2020թ. ընթացքում իրենց կողմից նախատեսվող գործողությունները, որոնք բխելու են վերոնշյալ ծրագրից:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

6. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Ներկա դասախոսներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր կողմից ղեկավարվող աշխատանքների ընթացքի մասին: Ըստ նրանց, իրականացվող աշխատանքների զգալի մասն արդեն կատարված է և դրանք գտնվում են ձևակերպման փուլում: Միաժամանակ, առկա են առանձին դեպքեր, երբ ուսանողների կամ դասախոսների կողմից ժամանակին չեն կատարվել հետազոտական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ինչն անխուսափելիորեն անդրադառնալու է ավարտական աշխատանքների ժամանակին կատարելու վրա:

Ս.Պիպոյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանությունները նախատեսվում է անցկացնել 2 փուլով և այն ուսանողները, որոնց կատարած աշխատանքները չեն համապատասխանի ներկայացվող պահանջներին, չեն երաշխավորվի հրապարակային պաշտպանության:

Որոշեցին՝

Ակտիվացնել իրականացվող աշխատանքները և վերացնել առկա թերությունները:

7. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա ընթացիկ ստուգումների տոմսերի հաստատման վերաբերյալ:

Որոշեցին՝

Հաստատել:

8. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2019-2020թթ. փոխադարձ դասալսումների ժամանակացույցի մասին:

Որոշեցին՝

Հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9

2020թ. փետրվարի 24-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Դասամատյաններում ուսանողների հաշվառման գրանցումների և դրա վերահսկողության հարցերի վերաբերյալ
2. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին ներկա էր նաև ՀՊՄՀ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Մ.Մելիք-Բախշյանը, ԿՔԱ ֆակուլտետի դեկան կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15 (տասնհինգ անդամ (ներկայաթերթիկը կցվում է)

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը դասամատյաններում ուսանողների հաշվառման գրանցումների և դրա վերահսկողության հարցերի վերաբերյալ:

Ռ.Սադոյանը տեղեկացրեց, որ արձանագրվել են ուսանողների հաճախումների ոչ ճիշտ գրանցում դասամատյանում, երբ բացակա ուսանողները ներկա են ստացել, ինչի համար կուրսի ավագին հայտարարվել է նկատողություն:

Հաշվի առնելով այն փաստը, որ ուսանողների հաճախումներն ազդում են կրթության որակի ապահովման և իրենց առաջադիմության վրա, պրոռեկտորը, դեկանը և ամբիոնի վարիչը հաջորդաբար դասախոսների ուշադրությունը հրավիրեցին հաճախումների գրանցման կարևորության վրա և խստորեն զգուշացրեցին, որ հաշվառումները պետք է կատարեն բացառապես դասախոսները՝ այն չթողնելով կուրսերի ավագների վրա:

Անդրադառնալով ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին Մ.Մելիք-Բախշյանը նշեց աշխատանքների փորձարարական և ուսանողների ինքնուրույն լինելու կարևորությունը:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

2. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը «Կենսաբանություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Մ.Գալստյանի և Է.Հովակիմյանի կողմից կատարվող ավարտական աշխատանքների թեմաների փոփոխության մասին (վերնագրեր): Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ նշված ուսանողներից 21.02.2020թ. ստացել է գրավոր դիմում (դիմումները կցվում են) առ այն, որ իրենց ղեկավար պրոֆեսոր Մ.Երիցյանի կողմից

սեպտեմբեր ամսին իրենք ստացել են իրենց աշխատանքների վերնագրերը և աշխատել դրանցով, սակայն ամբիոնի և ֆակուլտետի նիստերում հետագայում հաստատվել են այլ վերնագրեր: Ուսանողները խնդրել են փոխել իրենց թեմաների վերնագրերը:

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանը, Ռ.Սադոյանը, Ս. Պիպոյանը:

Որոշեցին՝

- Մերի Գալստյանի ավարտական աշխատանքի վերնագիր հաստատել
- Էլիզա Հովակիմյանի ավարտական աշխատանքի վերնագիր հաստատել

3. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ֆակուլտետի խորհրդի 27.02.2020թ. նիստում քննարկվելու է ռազմավարական ծրագրի շրջանակներում 2020թ. անելիքները: Ուստի ամբիոնի վարիչը խնդրեց դասախոսներին իրենց առաջարկությունները ներկայացնել մինչև 26.02.2020թ.:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

4. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի ընտրության մրցույթի վերաբերյալ: Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ 2020թ.-ի համար հայտարարված է 2 ծրագրերի մրցույթ, որին դասախոսները կարող են ծանոթանալ գիտության պետական կոմիտեի կայքէջում և անհրաժեշտության դեպքում հայտ ներկայացնել:

Արտահայտվեցին՝

Ռ.Սիմոնյանը, Ս.Պիպոյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնում առկա համակարգչային տեխնիկան չի բավարարում բոլոր դասերի սպասարկման համար և անհրաժեշտ է փորձել այդ հարցին տալ համապատասխան լուծում:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N15

2020թ. հունիսի 29-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առցանց նիստի

Ձայնագրության հղումը՝ *https://drive.google.com/file/d/1CH-PHqpByRaEFG-iafyjZYqmT3ArMrnE/view?usp=sharing*

Օրակարգ

1. Պետական ավարտական քննությունների արդյունքների մասին
2. Ընթացիկ քննությունների մասին՝ խնդիրներ, լուծումներ, ընդհանուր վիճակագրություն
3. Մագիստրոսական թեզերի ղեկավարման ընթացքի մասին
4. Ն.Մանվելյանի "Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում,, ատենախոսության քննարկում և կարծիքների ներկայացում /Տ. Թանգամյան, Ա. Բաբախանյան, Վ. Հովսեփյան, Ի. Սիրեկանյան, Կ. Ավետիսյան/
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15 (տասնհինգ անդամ)

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը պետական ավարտական քննությունների արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ բավականի հաջող ընթացք են ունեցել պետական ավարտական քննությունները, էական խնդրիներ չեն առաջացել: Ս.Պիպոյանն ասաց, որ հաջորդ նիստերի ընթացքում կքննարկվեն կատարվող ավարտական աշխատանքների նկատմամաբ պահանջները, ընդհանուր մոտեցումները և սկզբունքները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ընթացիկ քննությունների մասին՝ խնդիրներ, լուծումներ, ընդհանուր վիճակագրություն: Դասախոսները զեկուցեցին իրենց կողմից անցկացված ընթացիկ ստուգումների և ամփոփիչ քննությունների մասին: Ընդհանուր առմամբ կարևորվեց համաճարակային պայմաններում առցանց ուսուցման կարևորությունը, սակայն դրա հետ մեկտեղ բարձրաձայնվեցին նաև խնդիրները, որոնք ծագել են այդ ընթացքում, մասնավորապես նշվեցին տեխնիկական խնդիրները,

առցանց քննությունների առումով ուսանողների գիտելիքների ոչ լիարժեք բացահայտումը և այլն:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի ղեկավարման ընթացքի մասին: Թեզերի ղեկավարները տեղեկացրեցին ամբիոնի վարիչին ուսանողների կատարած աշխատանքներԻ մասին, որոնք ընթանում են ըստ նախնական պլանի:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը Ն.Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» ատենախոսության քննարկման և կարծիքների ներկայացման մասին /Տ. Թանգամյան, Ա. Բաբախանյան, Վ. Հովսեփյան, Ի. Սիրեկանյան, Կ. Ավետիսյան/: Ոլորտի մասնագետները նշեցին իրենց կողմից կատարված նկատառումները աշխատանքի վերաբերյալ:

Հայցորդը պարտավորվեց շտկել բոլոր այն թերացումները, որոնք ներկայացվել են տրամադրված կարծիքներում:

5. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2019-2020 ուսումնական տարվա ընթացիկ և ամփոփիչ ստուգումների տոմսերի վերաբերյալ:

Որոշեցին՝

Հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N16

2020թ. օգոստոսի 31-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առցանց նիստի

Ձայնագրության հղումը՝ *https://drive.google.com/file/d/1IohPN46IYzE882zIMjNPVOgw1-Q1YXQi/view?usp=sharing*

Օրակարգ

1. 2020-2021 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին:
2. 2020-2021 ուսումնական տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և վերահաստատման մասին:
3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության մասին:
4. Ամբիոնի լաբորանտների աշխատանքային պարտականությունների կազմակերպման մասին:
5. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության մասին:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ անդամ)

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2020-2021 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ սեպտեմբերի 1-ից մինչև 15-ը դասի են հաճախելու 1-ին կուրսի ուսանողները, այնուհետև մնացած բոլոր կուրսերը առերես անցկացնելու են իրենց գործնական, լաբորատոր պարապմունքները, իսկ դասախոսությունները լինելու են առցանց:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2020-2021 ուսումնական տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման և վերահաստատման մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից դասավանդվող առարկաների նկարագրերի և թեմատիկ տրոհումների մասնակի փոփոխված տարբերակները, հարցաշարերը և լրամշակված դասախոսությունները:

Որոշեցին՝

Հաստատել:

3. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության մասին: Ամբիոնի վարիչը հայտնեց որ դասաբաշխումը կատարվել է հաշվի առնելով յուրաքանչյուր դասախոսի մասնագիտական ուղղվածությունը: Բացի այդ, Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ ամբիոնում աշխատանքի են անցել նոր մասնագետներ՝ երկու կենսաբան և 1 քիմիկ: Նոր մասնագետները հակիրճ ներկայացրեցին իրենց մասնագիտական ուղղվածությունը և գիտական գործունեության ոլորտը:

Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ ուսումնական գործընթացի ընթացքում լինելու են նաև դասալսումներ և հայտնեց, որ առարկայի որակի պատասխանատուն դասախոսն է:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի լաբորանտների աշխատանքային պարտականությունների կազմակերպման մասին: Ամբիոնի վարիչը հայտնեց, որ կենդանաբանության լոբորատորիայում անցկացվող դասընթացների սպասարկումն իրականացնելու է Աբդոյան Ժեննին, բուսաբանության լաբորատորիայում անցկացվող դասընթացների սպասարկումն իրականացնելու է Ավագյան Ալվարդը, իսկ քիմիայի լաբորատորիաներում անցկացվող դասընթացների սպասարկումն իրականացնելու է Մելիքյան Ստելլան:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից կատարվող աշխատանքները: Ամբիոնի վարիչը հորդորեց բոլորին ակտիվորեն զբաղվել գիտությամբ, պատրաստել հոդվածներ, որոնց համար կարող են նաև հիմք հանդիսանալ մագիստրոսական աշխատանքների հետազոտությունները:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

6. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանանքերի կատարման մասին: Ամբիոնի վարիչը հանձնարարեց դասախոսներին մինչև հաջորդ ամբիոնի նիստը պատրաստել աշխատանքների նախնական վերնագրերը՝ նիստում քննարկելու նպատակով: Ս.Պիպոյանը նշեց նաև, որ եթե հետազոտական աշխատանքների կատարման հետ կապված առաջանում են

խնդիրներ, ապա կարելի է համապատասխան գիտահետազոտական լաբորատորիայի կամ ինստիտուտի հետ կնքել համագործակցության պայմանագիր:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

7. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ քիմիայի դասավանդման մեթոդիկայի մասնագիտությամբ ամբիոնի ասպիրանտ է դարձել Հակոբյան Լիլիթը, որին ամբիոնը պետք է նշանակի ղեկավար: Ամբիոնի վարիչը որպես ղեկավար ասպիրանտին առաջարկեց քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոմիկ Հարությունյանին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

8. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ իրենց կատարած աշխատանքները կներկայացնեն ամբիոնի հայցորդները: Հայցորդներ Ա.Խաչիկյանը և Ա.Փիլթակյանը ներկայացրեցին վերջին ամիսների ընթացքում իրենց կողմից կատարած աշխատանքները: Ամբիոնի վարիչը հանձնարարեց հայցորդներին առաջիկայում՝ ամբիոնի նիստերից մեկում հանդես գալ զեկուցմամբ՝ իրենց կատարած հետազոտությունների սահմաններում:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**